ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/106

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 24.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն 24.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տաթևի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Տաթև համայնքի տեխնիկայի կայանատեղիի ծածկարանի կառուցման նպատակով հայտարարվել է ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն), «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն, «Ավա Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է երեք մասնակիցների միջից առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչել նվազագույն գին ներկայացրած մասնակից՝ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ին:

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից www.taxservice.am կայքի կատարված ուսումնասիրության արդյունքում նաև պարզվել է, որ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի գործունեությունը մինչև 22.10.2018թ. դրությամբ ժամանակավոր դադարեցված է, հետևաբար հայտը ներկայացնելու օրվա դրությամբ նույնպես դադարեցված է եղել:

Պատվիրատուի կողմից 23.10.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է 2018թ. հոկտեմբերի 19-ի թիվ 3 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Նշված հայտարարության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հինգ օրացուցային օրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, www.taxservice.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի գործունեությունը մինչև 22.10.2018թ. դրությամբ ժամանակավոր դադարեցված է, հետևաբար հայտը ներկայացնելու օրվա դրությամբ նույնպես դադարեցված է եղել:

Այստեղ հարց է առաջանում, արդյոք ժամանակավոր դադարեցված կարգավիճակում Ընկերությունը իրավունք ուներ մասնակցելու պետական գնման ընթացակարգերին կամ ընդհանրապես որևէ այլ գործունեություն իրականացներ: Ընկերությունը ժամանակավոր դադարեցված լինելու կարգավիճակում չի վճարում հարկեր, այդ թվում նաև Ընկերության տնօրենի պաշտոնի համար նախատեսված հարկերը: Եթե չի վճարում, ուրեմն նշանակում է, որ տնօրենը չի աշխատում և որևէ այլ գործունեություն չի իրականացնում իր Ընկերություն կանոնադրությամբ նախատեսված գործունեության շրջանակներում: Այս պարագայում «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի տնօրենը հայտ է ներկայացրել (նաև գնային առաջարկը) և մասնակցել է Տաթևի համայնքապետարանի կողմից հայտարարված Ընթացակարգին, որի արդյունում կատարել է որոշակի գործողություններ, այն պարագայում, երբ Ընկերության գործունեությունը՝ հետևաբար նաև տնօրենի գործողությունները և լիազորությունները ժամանակավոր դադարեցված են եղել:

Բացի այդ, «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը իր մեջ ի թիվս այլ փաստաթղթերի պարունակում է նաև մասնակցի կողմից ներկայացվելիք գնային առաջարկը, որը ստորագրվել և ներկայացրել է Ընկերության տնօրենի կողմից: Սակայն գնային առաջարկը ստորագրելու պահի դրությամբ Ընկեության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է եղել: Իսկ այս պարագայում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետի պահանջները, այն է՝ Ընկերությանը անհամապատասխանություն շտկելու հնարավորություն տալը, քանզի ինչպես արդեն նշվել է, գնային առաջարկը ենթակա չէ շտկման:

Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու և այդ նույն ժամանակ Ընկերության տնօրենի կողմից գնային առաջարկը ստորագրված և հայտը ներկայացված լինելու պայմաններում հայտը ենթակա էր մերժման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Ելնելով վերոնշյալ իրավական հիմքերից և փաստական հանգամանքներից՝ գտնում ենք, որ Տաթևի համայնքապետարանի ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել Տաթևի համայնքապետարանի կողմից Տաթև համայնքի տեխնիկայի կայանատեղիի ծածկարանի կառուցման նպատակով հայտարարված ՍՄՏՀ-

ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

1. Հանձնաժողովի 15.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացած՝ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի հայտը հրավերի պայմաններին համապատասխանող գնահատելու և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասով կայացված որոշումները:

2. 23.10.2018թ. gnumner.am կայքում հրապարկված՝ 19.10.2018թ. թիվ 3 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>Տաթևի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Տաթևի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 24.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 27.10.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 25.10.2018թ. գրության տեղեկացնում եմ, որ Տաթևի համայքապետարանի կողմից հայտարարված ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ հրավեր) երեք կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը եղել են հրավերի պահանջներին համապատասխան: Հայտերը գնահատվել են՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթներով: Գնահատող հաձնաժողովը ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել նախապատվություն տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված ժամկետներում ներկայացրել է հրավերով պահանջվող որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացել ենք առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցման պատասխանը, որը համապատասխանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին:

Ուստի հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գնահատող հանձնաժողովը իր հերթական նիստում հաստատել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը և սահմանել հինգ օրացուցային օր անգործության ժամկետ:»

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Տաթևի համայնքապետարանի կողմից լիազորված ներկայացուցիչ Մարատ Գերասիմյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/106 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.10.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Տաթևի համայնքապետարանի կողմից 27.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը.

Տաթևի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի տեխնիկայի կայանատեղիի ծածկարանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտեր են ներկայացրել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն, «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն և «Ավա Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 15.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2-րդ կետով «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի, «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի և «Ավա Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել է Հրավերի պահանջներին համապատասխանող:

- 3-րդ կետով որոշել է ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ին:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Տաթևի համայնքապետարանի կողմից հայտարարված ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգին

մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն, «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն և «Ավա Բիլդինգ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ին: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է www.taxservice.am կայքի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի գործունեությունը մինչև 22.10.2018թ. դրությամբ ժամանակավոր դադարեցված է, հետևաբար Ընկերությունը գտնում է, որ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի գործունեությունը դադարեցված լինելու կարգավիճակում վերջինս իրավունք չուներ մասնակցելու պետական գնման ընթացակարգերին կամ որևէ այլ գործունեություն իրականացներ: Ընկերության ներկայացուցիչը եզրակացրեց, որ նման պարագայում «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա էր մերժման:

Բողոքներ քննող անձի «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցչին ուղղված այն հարցին, թե կարո՞ղ եք արդյոք մատնանշել «Գնումների մասին» ՀՀ օրենքի որևէ կետ կամ այլ իրավական ակտ, որը կփաստի այն մասին, որ եթե ընկերության գործունեությունը դադարեցված է, ապա ընկերությունը իրավունք չունի մասնակցելու գնման ընթացակարգին, «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը որևէ նման իրավական հիմք չնշեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տաթևի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզիև Տաթև համայնքի տեխնիկայի կայանատեղիի ծածկարանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետի համաձայն՝ նույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական

ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ին:

- «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ի գործունեությունը համաձայն www.taxservice.am կայքի ժամանակավոր դադարեցված է:

- «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն իրավունք չուներ մասնակցելու ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքով հստակ սահմանված են այն դեպքերը, որոնցով սահմանափակվում են մասնակիցների՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքը, որտեղ մասնակցի գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքը ներառված չէ, ինչպես նաև այն, որ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ տվյալ դեպքում «ԱՆԱՊԱՏ-2» ԱԿ-ն իրավունք չուներ մասնակցելու ՍՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգին, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 24.10.2018թ ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ